

ՊԱՏԻՐԱԿԱՆ

לְעַמּוֹדֵבָה שֶׁבְּאַתְּ בְּבִזְבֻּחַ
לְבָנָם.

($\zeta = \rho^m - \lambda - \frac{1}{2}$, L լեռ).

18.) Արքունի պալատն Ռուսաց յայսմ գիտաւորութեան
առաջի աչաց ունելով զապազայ առաջընթաց ազդեցութիւն
և զտիրապետութիւն, խորհելով խորհէր նախ քան զամենայն
եւրոպացի տէրութիւնս ի ձեռս բերել զառետրական օգուստ
ընդ հարուստ կողմանցն Ասիոյ, բանալ ճանապարհ ընդ ա-
րեելեան Հնդկաստան, միշտ ջանալով ի հիւսիսոյ անցանել ի
Կաւկաս, լսելով զայս պատգամաւորութիւն, ուրախ եղե-
յոյժ. բաւական զօրօք նուածեաց զովիեզերեայ քաղաքու-
թաբու, Դարբանդ և Նամախի: Տիրապետողական յառաջադի-
մութիւնը և երեելի քաջագործութիւնը Ռուսաց առիթ
ետուն հայ մէլիքացն Նարաբազու համայն ժողովրդականօք
մտանել ի ներքոյ հովանաւորութեան Ռուսաց. և ի ձեռն
յատուկ դեսպանի յայտնեցին զմիտուիւրեանց Մեծին Պետրոսի,
որ բարեհաճութեամբ զարձոյց զդեսպանս, հրամայեաց տիրա-
պետող հայ - մէլիք իշխողացն զօրս ժողովել ի ժամ զալստեան
իւրոյ ի տեսութիւն նորանուած ծովիեզերեայ կողմանցն Կաս-
պից, Գլխաւոր զեսպանն Խորայէլ Օրին ի 1707 թ. ի Պետեր-
բուրգայ իրը զեսպան առաքեցաւ ի Պարսկաստան առ Հու-
սէին շահն, տեղեկանալ զզրութիւնս միմեանց, և համոզելոյ
զմիտու Հայաստանցւոց առ այս նոր գիտաւորութիւն: Յետ յա-
ջող վերջուցանելոյ զյանձնաբարութիւնս վերադարձու-
բերելով ի շահէն Պարսից ի պարզե Մեծին Պետրոսի 200 հա-
զար ռուբլի, և յայտնեաց կայսերն թէ բաց ի Հայոցն Նարա-
բազու, Նամախին, Սլնախին և Նազախ-Բօրչալին պատրաստի
ւնին 17 հազար զինալառեալ զօրս և սպասեն կայսերական
հրամանի վասն բարձրացուցանելոյ զդրօշակ ապստամբութեան
ընդ գէմ մահմետականաց: Կայսրն մեծ շնորհս ցուցեալ Հայոց
բարեհաճեցաւ տալ Խորայէլի Օրին վասն ազատութեան Հայոց

մ'նչեւ զ 40 հազար զօրս Ռուսաց և զբնծայս Պարսից շնորհեաց վասն ծախուց զօրացն։ Խորայէլ համեստութեամբ մեծ շնորհակալութիւնս մատուցեալ թագաւորին հրաժարեցաւ յայն մեծ պաշտօնատարութենէն։

19.) Յառաջ քան զայս մեծն Պետրոս ունէր ի Պարսկաստան զոմն ի հայկազանց նաւասարդ անուն իրրեւ գործակալ, որ զամենայն հանգամանս և զփոփոխութիւնս, սկատահեալս ի խագաւորութեան Պարսից մանրամասն օրոգրութեամբ մատուցանէր թագաւորին և լինէր պատճառ ուրախութեան նորա։ Յետ նորա զայս պաշտօն կատարեաց Դազար ոմն, որ ստացաւ մեծամեծ ուսուրգես և աստիճան գեներալի։ Բարեմիս կայսրն հաճեցաւ յանձնել սմա զ 40 հազարեան զօրս վասն վերականգնելոյ զԴարաբաղ, բայց սա ևս ոչ յանձն էառ զառաջարկութիւն կայսեր, համարելով զայն գեր ի վերոյ քան զկարողութիւն իւր։ Հուսկ յետոյ Մեծն Պետրոս բարեհաճեցաւ պատասխանել, թէ ինքնին սկատրաստի է առաջնորդել զօրաց իւրոց վասն ազատութեան և օգնականութեան Հայոց։

20.) Յետ այսորիկ հայկազն մէլիքն Դարաբաղու իմանալով զգալուստ Մեծին Պետրոսի ի Դարբանդ, իսկոյն բարձրացուցին զդրօշակ անկախութեան և 60,000 զինավառեալ զօրք զէն ի ձեռին՝ պատրաստեցան ի ճակատ սկատերազմի։ Հայկազն Դաւիթ բէգ իշխանն Սիւնեաց արիասիրա, արգարակորսի, բարեսպաշտ և ծանօթն սուրբ Գրոց յետ տեսանելոյ և սրոշելոյ զսկզբնական և զվերջին հիմունս գործովութեան իւրոյ ընդ Գէորգ կամ Շահ—Նաւազ թագաւորին Վրաց, ել ի Վրաստանէ ի 1721 թ. Երկոտասան քաջընտիր զօրապետօք, որոց աւագքն են Մխիթար, մեծ Գէորգին, և Յայինդուրն, 40) հազար զինավառեալ զօրօք խազաց գնաց յաշխարհն Սիւնեաց. և արք զօրաւորք ի Հայոց լուեալ զգալուստ նորա, տառապեալք ի դառն ծառայութենէ այլազգեաց միաբանական սիրով ժողովեցան առ նա, նուածեցին զգաւառն Ոիւնեաց. և յաղթահարեալ թշնամին ի պէսպէս պատերազմունս է զի անկան ի պատերազմի և է զի ընդ կրունկն գաւնալով նկունեղեալ փախեան։ Գործովք արւոյն Դաւիթ բէկի նահանգն Սիւնեաց առ ժամանակ ազատեցաւ ի լծոյ այլազգեաց։ Յորժամ քաջ իշխանն Դաւիթ մլէր պատերազմունս ի սէր Հայ-

բենեաց ընդդեմ թշնամեաց, փաշայն օսմանցւոց եհարց ցԴաւիթ բէդ՝ թէ առ ի՞նչ պատճառ ժողովեալ զօրս ի Հայոց մարտ դնէ: Պատասխանի ետ Դաւիթ բէդ ասելով « Ես կատարեմ զհրաման Մեծին Պետրոսի »: Յայնժամ օսմանցիք փութով ձեռն ի գործ եղին ամրացուցանել զսահմանագլուխս իւրեանց, նուածել զպարսկական տեղիս յերեանայ մինչեւ ցԴավրէժ, որպէս զի արգելք լինիցին յառաջընթաց գործոց Դաւիթ բէդի և թագաւորին Ռուսաց:

Դաւիթ բէդն և Հայողակի մէլիքքն տեսանելով թէ երերի տէրութիւնն Պարսից և զօրանայ օր ըստ օրէ լինասակար իշխանութիւնն Օսմանցւոց ջան եղին տալ պատերազմն յերկրին Սիւնեաց ընդդեմ թշնամեաց. և երկու զօրապետք նորա Աւանիսան—Միրզայ և Աւան Իւղբաշի այլովք երկրաժին զօրօք պահպանէին զԴարաբաղ: Ավղանցիք ևս բարձրացուցեալ գրօշակ ապստամբութեանց՝ արկեալ յաթոռոյ ի 1722 թ. զթագաւորն Պարսից Շահ—Սուլթան—Հուսէին՝ տիրեցին Սպահան մայրաքաղաքին Պարսկաստանի, Լեկզիք կամ լեռնականք Դաղստանի տեսեալ զներկայութիւն կայսեր Ռուսաց և զբանակի նորին ի Դարբանդ՝ չհամարձակեցան ելանել յարշաւանս ի Դարաբաղ, յՈւտի և ի Գուգարս: Ուստի ոչ այլ ինչ մնայր Հայկազանց, բայց միայն յերկրէն իւրեանց միահամուռ զօրութեամբ հալածել զԹաթարս և զՊարսիկս, և փախստական առնել զԱրքի—Մուստաֆայ փաշայն, որ եկեալն էր զօրօք տիրապետել երկրին:

21.) Լուր գալստեան կայսեր Ռուսաց ի Դարբանդ իսկապէս իմացեալ Դարաբաղի հայ մէլիքացն և Վախտանգ արքայորդւոյն Շահ—Նաւազ Գիորգիոյ՝ 40 հազարեան զինավառեալ զօրօք ելին ընդ առաջ կայսեր Ռուսաց առ ավն Կուր գետոյ: Սակայն կայսրն յետ նուածելոյ զԴարբանդ, զԲաքու և զԳիլան յետս դարձաւ ի Ռուսաստան ի պատճառս թագաւորական գործոց. որով հատաւ յոյս յաջողութեան Հայաստանի և Վրաստանի:

22.) Հայք և Վրացիք յուսահատ մհալով ի մէջ սխերիմ և արիւնարրութշնամեաց իւրեանց, ապաւինեալ յԱստուած և ի սակաւաթիւ զօրս իւրեանց ընդդեմ բազմաթիւ զօրաց թըշնամեաց, զամս ոչ սակաւս մղեցին արիւնահեղ պատերազմունս

և ապա ակամայ կամօք հարկեցան ճանաչել զիշխանապետութիւն նոցա։ Սարի—Մուստաֆայ կառավարիչն Գանձակի իրքեւուն եթէ կայսրն Պետրոս չոքաւ ի խորս Ռուսաստանի, քաջալերեալ յախուռն յարձակմամբ եմուտ ի Վրաստան, քանզի թագաւորն Արայ անտերունջ թողեալ զհայրենիս իւր գնացեալ էր ի Ռուսաստան։ յետ սոսկալի սրածութեանց և կոտորածոց յոխորտանօք դարձոյց զզօրս իւր ի վերայ հայազգի մէլիքացն Ղարաբաղի, սպառնալով հէմն ի վեր կործանել զերկիրն։ Հայկազեան մէլիքըն երկրորդեցին զխնդիր իւրեանց առ կայսրն Ռուսաց, կամ տալ զօրս օգնականութեան ընդդէմ աշխարհաւերն Տաճկաց և Պարսից և կամ շնորհել տեղի ի կողմանս Կասպից ծովուն առ ի բնակել անդ։ Կայսրն Ռուսայ բարեհանեցաւ ի 10 նոյեմ. 1724.թ. և ետ հրաման գեներալ մայիօր Կրօպօտով կամենդանտին Դարբանդու առանց պատճառանաց տալ եկաւորեալն հայոցն զյարմարաւոր և զբաւականափ տեղիս մերձ ի սուրբ Խաչ բերդն—Սուլագ Ագրախան և Թարզու գետոց և վարիլ ընդ նոսա այնպէս, զի մի ելցէ ի նոցունց տրտունջ կամ գանգատ, ասելով. որովհետեղովովուրդս եկաւորեալս ի հայոց ընկալաք ի ներքոյ կայսերական պաշտպանութեան մերոյ։ Եւ զայսմանէ յայտնեաց հրովարտակաւ Խսայիա կաթուղիկոսին Աղուանից, և Հայ-մէլիքացն և ժողովրդոցն Ղարաբաղու. բայց հանգամանք ժամանակին չներկցին հայոց տեղափոխիլ ի սահմանս Ռուսաց, և Հայկազեան մէլիք տիրապետողքն մնացին ժողովրդովքն հանգերձ ի նեղ դրութեան։

23.) Քանզի սարասկեար Սարի Մուստաֆայ փաշայ բուն բանակաւ իւրով եկաց ի Գանձակ քաղաքի և մնացեալ զօրացն հրաման ետ բնակիլ ի սահմանս Հայ-մէլիքաց։ Դառնացաւ վիճակ ժողովրդոց։ Մէլիք-Աւան-Խան՝ որ հրամանատարն էր միւս մէլիքաց, ժամ գտեալ զրաւեաց զսէր Սարի-Մուստաֆայ փաշայի և առ երեսս հնազանդութիւն եցոյց. բայց ի ծածուկ սէր և մտերմութիւն ունելով ընդ Ռուսս գեղեցիկ իմն կերպիւդարան գործեալ եհար, կոտորեաց զ35,000 անձինս յԵնիշարեան բանակէ Օսմանցւոց և զփաշային փախստական արար ի բերդն Երեան, և բան նշանին էր. աղանդանեցէ+ ունին աւան ու բառապէլ է վասն աճեցման. անլայ-ուղէ+ շնորհ, որ աւ իսպանաց, առև-

շղացու է-ը է ժամանակ, Այս երեսելի անցք պատահեցան ի 1733 թուին:

Մէլիք Աւանն աղգայնովք իւրովք գնաց ի Ռուսաստան ի ժամանակա Աննայ կայսրուհւոյ, որ ընկալեալ զնա և զհամախաչս նորին մեծաւ պատուով ըստ արժանեաց նոցունց շնորհեաց աստիճան և ռոճիկ: Ժառանգք Մէլիք Աւան խանի բնակեալ յԱստրախան, ի Մոսկուա և ի Պետերբուրգ մտին ի կայսերական ծառայութիւն անուամբս — Կնիազ Սմբատեանք, Կնիազ Մէլիքեանք և Հայրապետեանք:

24.) Իսկ Դաւիթ իշխանն այրն խոհական և քաջարազուկ յաղթեալ յոդնախումբ թշնամեաց շինեաց ամուր բերդ մի ի գիւղի Հալիձոր և ժողովեալ ի Հայոց արս կորովիս, կացոյց ի վերայ նոցա սպարապետ զՄխիթար՝ զայրն անպարտելի և զօրապետ՝ զԲայինդուր իշխանն ի տոհմէ Սմբատեանց. մղեալ բազում պատերազմունս զամն չորս, իտպառ ջնջեաց յաշխարհէ անտի Սիւնեաց և Արցախոյ զամենայն թշնամիս. բայց յետ նուաճելոյ զգաւառս Աճանանի, Կառանի, Զաւանդուրի Բաղարերդի, Գիւնէի և Մեղրի, որ գլխաւոր բանակատեղին էր, ի միում ճակատամարտի ընդդէմ խանին Նախիջևանի ի պարտութիւն մատնեցաւ: Դեսպանք առաքեալք ի 1724, 25, 26, 27 և 1729 թուականին վասն խնդրելոյ զօգնութիւն ի կայսերաց Ռուսաց, պարզապէս ցուցանեն թէ յորպիսում վիճակի էր դրութիւն Հայոց Դարաբաղի: Սարի — Մուստաֆայ փաշայն կազմեալ ի Թուրքմէն, ի Քուրդ և ի Թաթար զօրաց զբանակ մի ինքնին առաջնորդեալ նոցա եմուտ իրոխտալով յերկիրն Սիւնեաց և բանակեցաւ հանդէս Հալիձորոյ, ուր էրն ժամանակաւոր տեղին կառավարութեան Դաւիթը բէզի: Անմոռանալին Դաւիթ յաջողակ ձեռնարկութեամբ ստիպեաց զփաշայն բառնալ զբանակ իւր. և ի դաշտին Հալիձորոյ ահեղ իմն մարտիւ ճակատեալ յաղթեաց նմա քաջապէս և դարձոյց զնա ի փախուստ:

25.) Ցետ մահուան Դաւիթի ի 1727 թ. եկաց ի տեղի նորաընտիր զօրապետն Մխիթար, որ քաջապէս պաշտպանեաց զհայրենիս իւր մինչև 9 1730 ամն. իսկ աղգատեացքն դաւաճանութեամբ սպանին զնա, և դարձեալ մատնեցին այլաղգեաց զհայրենիս իւրեանց, ոռոգեալն ջերմաջերմն արեամբ հայրե-

նանուէրն Հայոց վասն անկախութեան, իսկ հայկազեան զօրքն ամեներեան ցրուեցան. և ոմանք ի նոցանէ գնացին առ մեծ իշխանն Յովհաննէս, որ զայսու ժամանակաւ յաշխարհին Գուգարեան Ուտէացւոց զօրացեալ նուաճեաց ընդ իւրե ոչ սակաւ տեղիս. սակայն սա եւս ոչ կարաց ի գլուխ հանել զզիտաւորութիւն իւր, թողեալ զքաղաք իւր ի ձեռս այլազգեաց, խոյս ետ, մեկնեցաւ և գնաց յԱշխարխան:

26.) Պարսկաստան զամս տասն ի ձեռն վատարի շահ-իշխանաց կառավարեալ, վերջապէս ի 1732 թ. բարձրացոյց յաթոռ կիւրոսի զերեւելին Նազիր Շահ: Այս ահարկու պատերազմողն երկիցս անգամ յաղթանակ արար ի վերայ երկուց զօրաբանակացն Օսմանցւոց, մին մերձ յէջմիածին, իսկ միւսն ի Կարս, տիրեաց մեծի մասին Հայաստանի և Վրաստանի և ապա մայրաքաղաքին Տփխիսայ և Գանձակայ. տեսանելով զանչափ քաղութիւնս հայ-մէլիքացն Նարաբաղի, որք քաջութեամբ սլաշտալանեալ էին զհայրենիս իւրեանց, պարգևեաց նոցա իւրսպանչիւնոց արժանավայել պարզես, և հաստատեաց զիշխանաղետութիւնս նոցա յորդւոց յորդիս լինիլ տէր և իշխեցով սահմանաց իւրեանց: Յօրէ աստի մէլիքքն միմիայն ունելով զկախումն ի շահէն Պարսից, օր ըստ օրէ յառաջացեալ ընդարձակեցին զիշխանութիւնս և զզօրութիւնս իւրեանց: Առաւել քան զամենեսին շահն սիրեաց զՄէլիք-Աւան և զորդի նորա զՄէլիք-Եսայիաս, որովհետեւ զամն ողջոյն կերպեցին նոքա զզօրս շահին: Հայկազեան մէլիքքն մինչեւ յ1746 ամն ցմահն Նազիր-Շահի բացարձակ տէր և իշխան լինելով ի Նարաբաղ, ի վերջոյ գտին ինքեանց ոխերիմ հակառակորդ զգլխաւոր պետն Զուանշիրեան մեծի ցեղի՝ զՓանայ-Խան:

27.) Այսպէս հինգ առանձին Մէլիքական-ինքնիշխան տիրապետութիւնքն 1.) Զրաբերդինն՝ Մէլիք Մէջլում 2.) Գիւլիստանինն Մէլիք Արով, 3.) Վարանդինն՝ Մէլիք Շահնազար, 4.) Խաչենայն Մէլիք Ալավէրդի, 5.) Դուղախայն՝ Մէլիք Բախտամ, ինքնիշխանաբար կառավարէին զաշխարհն Նարաբաղու-Շահնազար մէլիքն Վարանդի տեսեալ զսերտ բարեկամական զաշնաղութիւնս մէլիք-Աղոմին Զրաբերդի, և մէլիք Յովհէփին Գիւլիստանի, երկեաւ. եմուտ ի բարեկամութիւն ընդ Զուանշիրեան Փանայ-Խանին, տալով նմա զզուսորն իւր ի-

կնութիւն և զանմատոյց տեղին ուր շինեցաւ ամրոցն Շուշի. և զամս երկոտասան պատերազմեցաւ ընդ մէլիք Աղասի և ընդ մէլիք Յովսէլիայ, որք քաջութեամբ պաշտպանէլին զանկախութիւնս իւրեւնց: Ներքին պատերազմունք յիշեալ Մէլիքացն աղետալի եղեն որպէս վասն ամրող անկախութեան Վարարաղու, նոյնողէս և սլատերազմող Մէլիքաց. և Հայքնակչաց երկուստեք: Սպառեցան կարողութիւնք նոցա: Ի վերջոյ մէլիք Աղամն և մէլիք Յովսէլին ի պարտութիւն մատնեալ ի Հակառակորդ մէլիք Շահնազարէն, փախստական գնացին ի Վրաստան, գտանել ազատութիւն ընդ Հովանաւորութեամբ Թէյիմուրազ թագաւորին Արաց:

Յայնժամ Փանայ—Խանն արձակ համարձակ տիրեաց երկրին և Հպատակաց նոցա. և ստիպեաց զամենեսին կատարել զկամս իւր: Յետ քանի ինչ ամաց մէլիք Աղամն և մէլիք Յովսէլին միջնորդութեամբ խանին Գանձակայ վերադարձան, և Հաշտութիւն արարեալ ընդ Փանայ—Խանին մտին ի Վարարազ և տիրեցին իրեւ Հպատակ իշխան երկրին և Ժողովրդականաց իւրեանց: Փանայ—Խանն ճիշտ պահպանեաց զայս պայմանապրութիւն, բայց յաջորդ նորա երրաշիմ Խանն ոչ Հայեցեալ ի սլայմանս հօր իւրոյ, կալեալ զմէլիք Եսայիաս Էարկ ի բանտ, ապա զըրկեաց զնա ի կենաց և ի կայից, և ի տեղի նորա կարգեաց զմէլիք Բախտամն:

28.) Եկատարինէ Բ. թագուհին Ռուսաց յետ նուաճելոյ զ'րիմ, դարձոյց զաշս իւր ի Կաւկաս և ի մերձակայ նահանգս Կասպիական ծովու, ուստի և զՎալերիան կոմսն Զուքով վերստին առաքեալ զօրոք ի Կաւկաս տիրեաց Դարբանդի, Բագուռոյ և Շամախւոյ: Կամք կայսերուհւոյն էին ազատել զՀայաստան և զՎարաստան ի ծանր լծոյ մահմետական բռնակալաց և առնուլ ընդ Հովանաւորութեամբ իւրով իրեւ զմի ի նահանգաց Ռուսիոյ: Սայրագոյն Հրամանատարն կաւկասեան զօրաց զԵներալն Պոտէմկին Հրաւիրական թղթակալութեամբ զրեաց առ յիշեալ մէլիքս զկայսերական բարեհաճութիւն, և յայտնեաց նոցա թէ, նա ունի Հրաման ազատելոյ զնոսա ի ծառայութենէ թուրքաց. և յորդորեաց զնոսա, միշտ պատրաստ լինիլ: Մէլիքը ստացեալ զկայսերական յուսազ բաւթիւն, յոյտնեցին զՀաւատարմութիւնս իւրեանց առ զահն Ռուսաց. և լիարերան

շնորհակալութիւնս մատուցին կնիազ Պոտէմկինին, նաև գրեցին առ Յովսէփ Արքեպիսկոպոսն Արդութեանց և յայտնեցին զպատրաստութիւն և զհնազանդութիւն, զոր ինչ հրամայելոց է կայսերութիւնն:

29.) Մէլիք—Մէջլումն Զրաբերդին, որդին Մէլիք—Աղամայ Մէլիք Արովն Գիւլիստանի որդին մէլիք Յովսէփայ, Մէլիք Բախտամն Դուզախի որդին մէլիք Աւանի յորդորական բանիւք գործակալաց Ռուսաց յուսալով ի մեծամեծ և ի փառաւոր խոստմունս նոյա ի 1787 թուականին եկին առ Յովհաննէս կաթուղիկոսն Աղուանից, Հաստատեցին զթուղթ երդման և Հաւատարմութեան և առաքեցին առ գեներալն Պոտեմկին, յայտնեցին և Յովսէփ Արքեպիսկոպոսին Արդութեանց, և Խնդրեցին զառաքումն զօրաց Ռուսաց ի սահմանս երկրին յիշեալ մէլիքաց:

30.) Մեծ հրամանատարն գեներալ Պոտեմկին յայտնեաց մէլիքացն առաքել զարժանաւոր անձն ի բանախօսութիւն. բայց միաբան Հայ մէլիքըն պատասխանեցին, թէ ոչ կարեմք առաքել զոք յահէ խանին, մի գուցէ յայտնի լիզի խանին դիտաւորութիւն մեր, յաղայն բնաջինջ լիցուք աղջաւ և տեղեաւ: Գրութեամբ Յովսէփ Արքեպիսկոպոսի յԱրարատեան երկրէ եկն առ Պոտեմկին մեծապատիւ Սաեփաննսա Դաւթեանց, որ ճշմարտապէս քացարեաց զմիտ և զդիտաւորութիւնս Հայ—մէլիքաց:

31.) Որդին Փանայ—Խանի Խրբոյիմ Խանն Շուշուայ իմանալով զյարաբերութիւն մէլիքացն ընդ գեներալ Պոտեմկինի և զծածուկ ձեռնարկութիւնս գործակալացն Ռուսաց նաև զմիաբանութիւնս Մէլիքաց ընդ Յովհաննէս կաթուղիկոսին՝ սպասէր դիպոլ ժամու վրէժին: գիր լինիլ. և կալեալ բանտարկեաց զմէլիք Արովն Գիւլիստանի՝ յափշտակեաց զամենայն կայս և կարասիս նորա: Խրբայիմ Խանն թէպէտ գրութեամբ գեներալ Պոտեմկինի առանց պատժոց արձակեաց զմէլիք Արովն ի բանտէ, բայց յորժամ խզեաց զդաշն սիրոյ ընդ Հերակլ Արքային Վրաց, կոչեաց առ ինքն զմէլիք Մէջլումն, զմէլիք Արովն և զմէլիք Բախտամն էարկ զնոսա ի բանտ և ոկսաւ աներկիւզ զկալուածս և զերկիրս երից մէլիքացն քարուքանդ առնել: Եւ յորժամ Հերակլ արքայն Վրաց խաղաց զօրօք Ռուսաց ի Գանձակ,

մէլիք Մէջլումն և մէլիք Աբովն զերծեալ ի կապանաց բանտից փախստական անկան առ Հերակլ, ինդ բեցին զօգնութիւն վասն պաշտպանութեան երերին և ժողովրդոյ իւրեանց։ Հերակլ արքայ փութով զօրս յօգնութիւն հաճեցաւ հասուցանել թուով չորս հազար՝ զօրավարութեամբ կնիազ Օրբէլիանի, բայց երբ զօրավարն Ռուսացով ստացաւ զանակնունելի հրաման յետս դառնալոյ զօրօքն ի Ռուսաստան՝ Հերակլ զօրօք Ռուսաց գարձաւ ի Տփխիս, և Հայ մէլիքըն ոչ ուստեքէ օգնութիւն գտեալ գնացին զհետ նորա։

32.) Երբայիմ Խանն տեսանելով զի՞նասաքեր ձեռնարկութիւնս Ռուսաց ընդդէմ իւր, զերկիրն մէլիք Բախտսմի ետ ի ձեռս Պարսից, մահադ եղով թունաւորեաց զՅովհաննէս կաթուղիկոս, քարուքանդ արար զերկիրն մէլիք Մէջլումի, իսկ ի տեղի մէլիք Աբովի կարգեաց իշխան զայլ ոք։ Հազարաւոր հայք ի սուր սուսերի մաշեցան կատաղութեամբ այսր սկարսկի և այլ հաղարաւորք ևս բոնագատեցան սոսկալի տանջանօք թողուլ զքրիստոնէութիւն, և այլ բազումք մանաւանդ ի ժողովրդականաց մէլիք Աբովի իբրև հինգ հարիւր տունք ընդայլոց բազմաց թողեալ զբուն տեղիս ծննդեան իւրեանց տարադէմ գնացին որոնել ինքեանց ապահով տեղիս ի Վրաստան, ի Դարբանդ, յԱշտարիսան, ի Ազլար, ի Շամքոր, ի Ազնախ, ի Տփխիս և բազումք ևս ի Տաճկաստան։

33.) Աղայ Մահմէդ խան շահն Պարսից զայրացեալ ի վերայ յանդուգն արարմանց Երբայիմ Խանին, որ չէաւ յանձն հպատակել ինքեան ի 1795 թ. բազմաթիւ զօրօք յարձակեցաւ ի Պարաբաղ և զամս երկուս շարունակ քանդեաց և աւերեաց սրածութեամբ, ի վերջոյ տիրեաց Շուշի բերդին, ուրանօր և եգիտ զգերեղման իւր. քանդի ի սմին քաղաքի դուաճանք նորա սպանին զնա։ Նախ քան զսպանումն իւր միով տմաւ յառաջ այս Ախտայ—Խան—Շահն յարձակեցաւ ի Վրաստան աւերեաց զայն սրածութեամբ։ Անբաղդ մայրաքաղաքն Վրաց Տփխիս մոլեռանդութեամբ զինուորաց Պարսից զերիս տիւս և զերիս գիշերս հրեղէն ովկիանոս եղեալ խստառ դարձաւ ի մոխիք։ Տասն և մեց հազար գերի ալջունք և տղայք, յորոց 4000 Վրացիք և 12000 հայ գնացին բազմացուցանել զմիւ հարճից մեծամեծաց Պարսից ի հարէմն նոցաւ։

34.) Այս ցաւալից համբաւ եհաս ի լուր կայսեր Ռուսաց Պաւլոսի Ա. որ հրաման ետ գեներալ Պոտէմկին զօրապետին տիրել կողմանցն Դարաբաղի. իսկ Վրաստանն զիսաղաղութիւն եղիտ միով սակաւածեռն բանակաւ Ռուս զօրաց. Այսպէս Ռուսաստանն որ իսկզբան 18 դարուն էր ճշմարիտ բարեկամ և պաշտպան Դարաբաղու Հայոց և Աերին Հայաստանի ի վերջ նոյն դարուն նախախնամութեամբն Աստուծոյ եղեւ հետզհետէ շնորհալի և ողորմած վեհափառ տէր և արքայ:

Յետ աւերման Տփխիսայ յԱղայ—Մահմատ - Խանէ Հերակլ արքայ Երկուցեալ ի միւս անգամ արշաւանաց նորա, զանազան արտօնութեամբ համաձայնեցաւ ոմանս ի տիրապետող Հայ—մէլիքաց Դարաբաղու ածել ժողովրդովք նոցա ի բնակիլ ի Վրաստան, որոց ոմանք տարեալ բազում նեղութեանց և ցաւոց ոչ կորուսին զհաւատարմութիւնս առ Գահն Ռուսաց. Շերստին խնդրեցին ի ձեռն զեն. Պոտէմկինի և Յովսէփ Արքեպիսկոպոսին զկայսերական պաշտպանութիւն և զօգնութիւն աեղափոխելոյ նախապետական իրաւամբ և ժողովրդովք ի Դարբանդ կամ ի Սոմխէթ. առ այս հետեւեցաւ բարձրագոյն հրովարտակն Պաւլոսի Ա. առ մէլիքս և առ իշխանս Հայոց Դարաբաղու, որով թոյլատրէր նոցա ժողովրդականօք Հանգերձ տեղափոխիլ ի նահանգս Գիորգի թագաւորին Վրաց, որ կայր ի ներքոյ հովանաւորութեան Ռուսաց. և տայ հրաման յիշեալ թագաւորին՝ բնակեցուցանել զնոսա ի վիճակս Դաղախի և Բօրչալւայ և կամ ուր և կամիցին. միևնոյն նախնական իշխանութեամբ, փառօք և պատուօք և ժողովրդականօք յօգուտ անկեալ թագաւորութեան:

35.) Արքայն Վրաց Գիորգի Ժ. Ընկալեալ ի ձեռաց մէլիք Զումշուտի և Փրիդոնի զհրովարտակ կայսերն յՅ Յունիսի 1799թ. շնորհեաց մէլիք Մէջլումին առանձին հրովարտակ, յորում ի միջի այլոց գրեալ է: « Դուք բերիք առիս ի մեծ կայսերէն Ռուսաց զհրովարտակ վասն բնակեցուցանելոյ զձեզ ի տէրութեան մերում, և տալոյ ձեզ սեպհական տեղի. ընկալեալ ի յարգանս զիսդիր ձեր. Մեք շնորհեմք ձեզ ի սեպհականութիւն զքերգն կօւոյ և զնահանգն կարի բնակչօք, տեղաւ, հողով և ջրովն և լերամբք ըստ այժմեան սահմանագծին. բայց որովհետեւ կօտին յառաջ քան զայս տուած է հանգու-

ցեալ Շամիր - Աղին. եթէ որդիք կամ թռուունք նորա երեես-
ցին՝ յայնժամ նահանգն այն ըստ խռամբան մերոյ կրկին տա-
ցի նոցա. իսկ ձեզ ի տեղի նորա տաց զայտ նահանգ. իսկ եթէ
ոչ ոք երևեցի ի նոցանէ գուք տիրեցէք յաւիտեան, թագա-
ւորն Գիորգի շնորհեաց մէլիք Մէջլումին զգիւղն Շնօղ Ա-
Դուել. մէլիք Փրիդոնին զգիւղն Ուզունլար. (Օձուն) իսկ մէլիք
Արուիին՝ զիօնիս. ըստընաշ գավառական մաքարագործութեան և պատառ
36.) Մէլիք Արով բնակեալ ի Բօլնիս, գոլով այր հզօր և աշ-
խարհաշէն լցոյց բազմամարդութեամբ զնահանգն Բօլնիսոյ և
ըստ գրելոյ Կաւալեսկոյ միշտ ի պատրաստի ունէր աւելի քան
զ1000 զինավառեալ արս կորուիս, որով վանեալ զթշնամիս
ի խաղաղութեան պահէր զնահանգն իւր. Արքայորդին Վրաց
Ալէքսանդր բազմիցս յորդորեաց զնա հակիլ յիւր կողմն, բայց
սա ոչ հայեցեալ ի բազմադիմի խռամբունո նորա, հաստատ
պահեաց զերդումն առ գահն Ռուսաց, ի մոի եզ տեղափոխել
ի նահանգէն Ախալցիոյ զ1000 զերդաստանս Հայոց, և յա-
ճախ հեծելազօրօքն յարձակէր ի վերայ վաշայրութեան Ախալ-
ցիոյ, որով ծագեցաւ անբաւականութիւն ընդ մէջ Ռուսաց
և Թուրքաց, բայց փութով զեներալ Լազրե դադարեցոյց
զյարձակումն նորա. Ի 1800 թ. սա հրամանաւ Գիորգի Ժ. Կ.
կազմեաց սահմանապահ զօրս յԱղքօրբի, և ստացաւ զպատ-
ուանուն «Քարուսան - Էտչ» . պահպանէր զերթեեկ վաճառա-
կանս և զկարաւանս նոցա ի կողք և անտի ի Վրաստան, ստա-
նալով ոռճիկս աւելի քան զ500 թռուման: Գիորգի արքայ վասն
քաջագործութեանց սորա միշտ կոչէր զնա «Քաղաքական շքա-
ռշտ», աշխանաւուր ոքու Հայիան Աւելի+ Յանէւայ, առաջ Նմա լիտէրատ
շնորհակալունիւն » : Մէլիք Արով և ազգական նորա Եւսամի
նուանեցին զփախուցեալ Ղարաբաղցիս ի Բամբակաձոր ի սահ-
մանս Օսմանցւոց. մէլիք Մէջլում հակառակ եկաց սյսմ, վասնորոյ Գիորգի Ժ. Կ. շնորհեաց մէլիք Մէջլումին զիւն - Ալին
Բօրչալուի փոխանակ հպատակաց իւրոց:

Ցետ մահուանն Գիորգայ արքայազն Դաւիթ Խլեաց զլիշեալ
Արխին ի Մէջլումայ, և սա գանգատեաց գրաֆ Մուսին - Պուշ-
կին, տալ նմա փոխանակ Լոռոյ զյիշեալ Խան - Արխին: Գրաֆ
Մուսին Պուշկին զնեաց ի նմանէ զԼոռի 6000 ռուբ. և միջ-
նորդեաց կայսեր վարձատրել զմէլիք Մէջլումն վասնորոյ հա-

ւաստարմութեան ռախելի նորվէ: Բայց իշխան Ցիցիանովն յամենայն գէպս հակառակ եկաց մէլիքացն Նարաբաղու, ողատճառիլով՝ թէ իբրայիմ - խանն ունի 60,000 տուն հայս ի հպատակաց հինգ երեսելի մէլիքաց հայոց, որը զսկզբնաւորութիւնս իւրեանց առնուն ի թագաւորաց հնոյն Հայաստանի:

Մէլիք Մէջլումն թողեալ զՎրաստան վերադարձաւ ի Նարաչաղ. և յորդորական բանիւք համոզեաց զԻբրայիմ - խանն Շուշոյ մտանել ի հպատակութիւն Ռուսաց. ի ձեռն մէլիք Ռուշանի ճեղքեալ զզօրս Պարսից, զօրս յօգնութեան հասոյց գնդապետ Կարեագինի ի բերդն Շահ - Բուլախ:

Ի ժամանակս կուսակալութեան կնիազ Ցիցիանովի քաջութեամբ հռչակեցան մէլիք Արովն և որդի նորա Ռոստոմ բէգն, հաւաքեալ ի ժողովրդականաց զքաջարի հեծելազօրս պահպանէին զսահմանագլուխս Պարսից, և կատարէին զպաշտօն արագահաս զօրականաց: Ի 1804 թ. ի ժամ պաշարման Երեան բերդի իսպառ կարճեցաւ երթեւեկութիւն և հաղորդակցութիւն Վրաստանի ընդ զօրաց կնիազ Ցիցիազ Ցիցիանովի, յիշեալ Ռոստոմ բէգն քաջապէս երկիցն հասոյց յնրեան վառօթ, ոււմբս և պաշարս ուտելեաց: Յամնեանն Օգոստ. ի 1804 թ. կնիազ Ցիցիանով կրկին առաքեաց յԵրեանայ զքաջն Ռոստոմ բէգ ի Փամբակ վասն բերելոյ պաշար ուտելեաց, և պաշտպանելոյ ի ճանապարհին զվերադառն Վրացի իշխանս յԵրեանայ:

Ի ճանապարհին Նարաբիլիսոյ ի Փամբակածոր բանակն Ռոստոմ - բէգի ընդ Վրացի իշխանաց պատահեցաւ տասն - հազարեան բանակին Պարսից՝ զօրավարութեամբ Փիր - Նուլի - Խանին և Ալէքսանդրի Հերակլեան: Աստ բայցաւ արիւնահեղ պատերազմն, և ի խոնիլ հեծելազօրացն Պարսից ընդ առաջնապահ Նարաբաղցի հեծելազօրս, երիվարն Ռոստոմ - բէգի, որ ի ճակատ արձանացեալ կայր, սպանաւ, և ինքն երիս վէրս ստացաւ, բանակ Պարսից ի պարտութիւն մատնեցաւ, որոյ կէոքն գնացին ի Թէհրան, և կէոքն բանտարկեցան ի Կայրէժ: Ալէքսանդր Հերակլեան, որ քաջ ճանաչէր զվերաւորեալն Ռոստոմ - բէգ, հրամայեաց արիւնաթաթախ տանել զնա ի բուն բանակն առ Արքաս - Միրզայ՝ ժառանգ Պարսից, որ հրամայեաց պրկեալ ձեռօք և երկաթի կապանօք բանտարկել զնա ցվերազարձ իւրյետ վեց ամսեայ խաւարչտին բանտարկութեան և դառն տան-

ջանաց Ռուսութ - բէգն սպանաւ ի 1805 ամի ի Դայրեժք քաղաքի:

Մէլիք Զումշուտն վերադարձեալ ի հայրենիս իւր ի Ղարաբաղ՝ ոչ ստեաց զերդումն իւր, այլ միշտ տայր օգնութիւնս և պաշար՝ նեղեալ զօրաց Ռուսաց որ ի Շուշի: Յետ մահուանն կնիազ Ցիցիանովի Եբրահիմ - Խանն Շուշոյ ստեալ զերդումն իւր կալաւ զկողմն Պարսից, մէլիք Զումշուտն ձեռնտու եղեգնդապետ Լիսանեիլի առ տեղեաւն սպանանել զուխտազանց խանն. և յօրէ աստի այս մէլիք միշտ և հանապազ յայտնէր գեներալ Նէստայելին զհանգամանաց գործոցն Ղարաբաղի և Պարսկաստանի:

Յետ մահուան մէլիք Աբովի որդի նորա մէլիք Մինաս բէգն դիմեաց խնդրանօք առ կուսակալն Վրաստանի Տորմասով առ ի հաստատել ինքեան որպէս սեպհական ժառանգութիւն զբօւնիս ընակչօք հանդերձ. բայց ոչ յաջողեցաւ նմա կատարումն սկսր խնդրոյ. վասնորոյ Ղարաբաղի մէլիքքն վերադարձան անդէն ի 1808 ամի ի հայրենիս իւրեանց: Աստանօք սպառին պատմութիւնք գործոց նոցա ի Վրաստան: — Ի Վերին Հայաստանի:

37.) Հայք որք ի սահմանի Վրաց էին, այն է ի Սոմիէթ, ի Բորչտի, ի Լոռի, ի Ղազախ և ի Շամշադին ընդ Վրաստանի կային ի ներքոյ հովանաւորութեան Ռուսաց. իսկ Արտրատեան գաւառն և Ա. Աթոռն Էջմիածնի հետեր ընդ բռնութեամբ Պարսից: Յանկարծ շահզատայն Աբրաս - Միրզայ բաղմաթիւ զօրք յարձակեցաւ ի սահմանս Վրաստանի, կամելով վերստին ի ձեռս բերել զկորուսեալ գաւառս իւր, շատ նեղացոյց զշայս, զերեւելի իշխանս և մանաւանդ զբարձրաստիճան եկեղեցականս, հրամայելով նոցա յորդորել զշայս ունիլ զկողմն Պարսից: Բռնութիւն Շահզատային ի վերայ Հայոց յայնժամ քան զշափն բարձրացաւ. երբ քաջարի զօրքն Ռուսաց դիմոցին ի վերայ զօրաց Պարսից և ստիսկեցին դառնալ յետս: Նախ յաղթութիւնն հայազգի քաջամարտիկ իշխան Մադաթեանի ի Շամքոս ի վերայ Պարսից, և առա պատերազմն Գանձակայ (Ելիսավետոպոլոյ) նախազուշակեցին զապագայ վիճակ նոցա. բանակն Կաւ կասեան զօրաց առաջնորդութեամբ մեծ զօրապետին Պատկերի, ի վրէժ առնելով յաւ երազաց խազաղութեան, ի 1827

ամին էանց ընդ Աղղիբեռւկ ընդ Բէզարդալ և ընդ լերինս Բամբակայ՝ եմուտ յէջմիածին և ի հին Նախիջևան, արագութեամբ նուաճեաց զԱրբանապատ, զՄարգարապատ, զԵրեան, զՄարանդ և զԹավրէզ. ձգեցաւ ի Մարտանդ և ի Խոյ և Հուսկ յետոյ զտեղի էառ յԱրտաւիլ և ի ստորոտաւ երինն Ատմիանքու: Այսպէս զինու զօրութեամբ Ռուսաց զոզցես Պարսկական Հայաստան նուաճեցաւ ի սուղ միջոցի: Նախ քան զնուաճումն երկրին Արարատայ Եղբայր Սարդարին Երեանայ Հասան-խան. և Նազզադայն մեծ վտանգ սպառնային Մայր Աթոռոյն Ա. էջմիածնի մանաւանդ վեհափառ կաթուղիկոսին. ուստի հոգելոյս Հայրապետն Եփրեմ միաբանօքն էջմիածնի եկն ի սահմանս Ռուսաց ի Նարարադ և ապա ի Հաղբատ: ուր եկաց մինչեւ զվերջ պատերազմին Ռուսաց ընդ Պարսից:

38.) Յաւարտ Համառօտագրութեանս արժան է յիշատակել աստ և զանուանս այնց Հայկաղն անձանց որք զանձինս իւրեանց ոչ խնայեցին ի Ժամանակագրութեանց ընդ Պարսից, ընդ Օսմանցւոց և ընդ Կաւկասեան լեռնականաց և օքանչելի սիրագործութեամբ հոչակեցին զինքեանս ի մորզս պատերազմաց և ճակատուց: Աշուարակեցի Ներսէս Արքեպիսկոպոսն՝ որ եղեւ յետոյ կաթուղիկոս: իսաք ի Ճեռին ընդ գրաֆ Պասկեիցի եմուտ ի Հայաստան և զմեծ մասն նորա քարողելով արար Հպատակս Ռուսաց: Նամշաղնեցի Դրիգոր Արքեպիսկոպոսն Քալանթարեանց զշեցեալ զտարադ չերքեղի սուր ի Ճեռին Հալածականս արար զապստամբս Նամշաղնի, Նազախի և Բորչալուի, որոց բնակիչը ի տես սնելին զնա զինավուեալ, իրաւամբ Փէտէկուէին զնա և Պարսկական: Քաջամարտիկ իշխանն Մադաթեան հոչակեալն պատերազմական հրաշագործութեամբն, պատերազմական սիրագործութեամբ Գանձակայ և Նամքորի խոցեաց զսիրտ Արբաս-Միրզայի: Գնդապետն Ապզորոս Լազարեանց՝ որ անդուլ ջանիւք և իմաստուն կարգադրութեամբ եկաց ի գլուխ զալթելոցն ի Պարսկաստանէ անձանց իբրև 40,000աց ի Հայաստան ինախարնակ և ի Հայրենի աշխարհիւրեանց: Իշխանն Վասիլ Բէհրուղեանց վանեաց զթշնամիս, և զդրօշակ Ռուսաց բարձրացոյց ի կատարու լերանց Բաշ-Իիդիկլեարի և ի Կարս: Անպարտելի Եշխանն Սովորէս Երկայնարազուկ Արդութեանց վեր ի վայր արար զԿաւկասեան լեռնաբնակու և բազմաճիզն

նահատակութեամբ և պատերազմօք կանգնեաց ինքեան կոյժող
և արձան ի բարձունս Կաւկասեան լեռանց:

Ցիշատակաց արժանի են Կարնեցի Կարապետ Արքեպիսկո-
պոսի Բագրատունի և Ստեփաննոս Արքեպիսկոպոսն Կարսայ,
որք անքուն քարոզութեամբ պատրաստեցին զմիռոս Կարսեցի,
Կարնեցի, Բասենցի և Տայազէղցի Հայոց գառթիլ ի Հայատան:
Քաղթականք երից Փաշայութեանց Թուրքիոյ տեղավուխեցան
12,655 գերդաստանօք ոգիք իրր 76,000 և եկեալ հիմնեցին
զրնակութիւն իւրեանց ի զանազան տեղիս — յԱխալցխայ և
ի սահմանս նորին, ի գաւառսն Շիրակայ, Երևանայ և Գեղար-
քունոյ: — Հնարին ինչ է մոռանալ զԱրծտիեցի Մանուկ ա-
ղոյն, որ քանի մի թիկնապահ առիւծանման Երիտասարդօք
հայելով յալէզարդն Մասիս, ի միտ բերելով զմեծութիւնս ազ-
գուն, ջարդելով զըռւրդստանցիս, ապա ի Մասիսն յայսկոյս
անցեալ ի սկզբան պատերազմոց Խուսաց ընդ Պարոից խոր-
տակեաց զզօրս Հասան - Խանի, որոյ խորամանկութեամբն անձ-
նաղոչ եղեւ ի սէր հայրենեաց: Անհնարին է ի մոռացոնս արկտ-
նել զհիասքանչ քաջազործութիւնս Դարաբաղցի, Երեանցի,
Լոռեցի, Զորագետցի և Դազախեցի Հայոց, որք զհայրենեաց
քար և հողն Պարսկական արեամբ յուացեալ, զարիւնս իւրեանց
թափեցին վասն ազատութեան հայրենի աշխարհին իւրեանց:
մարթ ինչ իցէ մոռանալ դնուլավերցի հսկայն Սօսի աղայ և
և զմելիք Յովհանջանն, որք խոյանային ի սարս և ի ձորս
Քվէշու և Բօլիխսի՝ զառաջուունել Երկրակործան Քուրդ Օքիւզ
աղայի, սսլանին զորդի և զզօրս նորա, ապա ի պակասիլ վա-
ռոդոյ՝ հսկայքս զէն ի ձեռս առիւծապէս ալնդեցան զհետ նո-
ցա, հարին և հարան և ի վերջոյ անկան զնախանձելին մեռանե-
լով մահ: Այժմ գնամք առ Զորագետցի: Գովասանական բա-
նիւք պատմեն ականատեսքն զքաջագործութիւնս ննօղեցի Վե-
րան քեխի Բէզրաշեանց, Հազրատեցի Յարութիւնի Երզնկեան,
ըթահատ Քաղալի Պարանեան, Դսեղեցի ահեղատեսիլ և լիթ-
խարի Յովակիմոյ Թումանեան, որք սրով, Շրով և Հրազինուք
քաջրնտիր սպառազինեալ Երիտասարդօք դողացուցեալ զսարս
և զձորս Լոռւոյ և Զորագետի, արիարար Հոչակեցին զին-
քեանս ընդզէմ սրիկայից և առաջնախաղաց զօրաց Պարսից,
որք զէմ եղեալ կամեին, դալ ի քանդել զՀաղբատ: ունիլ զձե-

բուհի հայրապետն Եփրեմ, և կենդանի տանիլ ինուէր Շահզատային. բայց արիութիւն Զորագետցւոց հալածական արար զՊարսիկ զօրս:

39.) Յետ նուաճելոյ Կայսերութեան Ռուսաց ղԵրեան և զրոլոր նահանգս Խրարատեան, և ազատութեան Մայր Աթոռոյն Օ. Էջմիածնի, ծերունադարդ Հայրապետն Եփրեմ դարձաւ ի Հաղքատայ ի 1828 ամի յաղատեալն ի Սուրբ Էջմիածին, ի 1830 ամի, ի պակասիլ լուսոյ աչաց Հրաժարական ետ, ընտրել զոք ի տեղի իւր և ի 1831 լնտրեցաւ Յովհաննէս Ը. Կարքեցի ի կաթուղիկոսութիւն Հայոց. յորոյ աւուրս հաստատեցաւ կանոնադրութիւն յաղագս կառավարութեան եկեղեցեաց Հայոց ի Ռուսաստան, ի կայսերէն Ռուսաց ի 11 Մարտի 1336 ամի, որով և բացան Սրբազն Սինօդն Էջմիածնի, վեց պիճակային Կանսիստորեայք, Հոգեւոր կառավարութիւնք: Սա ի կենդանութեան իւրում վճարեաց զծանր պարտս Աթոռոյն. և զտասն հաղար մանէթ եղ յարքունի բանկս յանուն Սուրբ Աթոռոյն Լուսաւորչի:

Թոստոմ — ԲԵԿ Խրզնկեանց.

ԲԱՆԱՍՏԵՐԱԿԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆ ԵՒ ՀՆՏԱՆԻՔԸ

ՄԱՏԱԴ ՍԵՐՆԴԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷԶ, ԵՒ ՆՈՑԱ՛ ՄԻՄԵԱՆՑ
ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ.

(Ե-բ-ն-ի-ն-ի-ն և լուրջ)

Այսպէս ուրեմն ուսումնարանը կարող է առաւել մեծ չափով աշակերտի բարբի և կամբի վերայ աղդել և նորան ապագայ կեանքի համար նախապատրաստել քան թէ ընտանիքը. ոյ, ուստի ու ու իւլուն ու անհրաժեշտ ու ու իւն է ընտանիքի բնաւորութեան իւլունիւն ու ու իւրաքանչեան Արք:

Այդ գաստիարակութեան երկու հաստատութիւնների խնդիրներից մինչ է որ նրանցից իւրաքանչիւրը ինչ սահմանների մէջ որ միւսը ինքնուրոյն գործումէ պիտի յարգէ, միւսի իրաւունքներն կամովին պիտի ճանաչէ և նորան պէտք եղած ու շաղրութիւն ընծայել և երբէք չըպիտի մանուկների առ միւսի գործ գրած միջոցներ պախարակէ. Աւ որովհետեւ դաստիարակչի